

**Երևանի Կ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական
համալսարանի գիտխորհրդի 2007-2008թթ.**

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

05.12. 2007թ. N 3 նիստի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Լեզվի և հաղորդակցման տեսական դասընթացների վիճակը և զարգացման հեռանկարները ԵրՊԼՀ-ում / կորդինատոր՝ լեզվաբանության և հաղորդակցման ամբիոնի վարիչ Կ. Աբրահամյան/
2. ԵրՊԼՀ-ի ամբիոնների 2008թ. գիտահետազոտական և գիտամեթոդական պլանների հաստատում:
3. 2007թ-ի «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթի արդյունքների մասին:
4. 2007 թ-ի «Լավագույն ֆակուլտետ, ուսանող և լավագույն ակադեմիական խումբ» ստուգատես-մրցույթի հաղթողների պարգևատրում:
5. Ամբիոնի վարիչի մրցույթի ընթացակարգի մասին:
6. Ընթացիկ հարցեր

1. Լսելով և քննարկելով լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ Կ. Աբրահամյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ում լեզվի և հաղորդակցման տեսական դասընթացների վիճակի և զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Արձանագրել դրական տեղաշարժեր լեզվի և հաղորդակցման տեսության դասընթացների դասավանդման և զարգացման գործընթացում.

Վերանայվել և հստակեցվել են բակալավրիատում դասավանդվող տեսական առարկաների ծրագրերը, մշակվել են առարկայական նկարագրերը:

Ընթացքի մեջ են տեսական առարկաների դասախառնությունների էլեկտրոնային տարբերակների ստեղծումը և համալսարանի կայքում տեղադրումը, որը նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2007-2008ուս.տարվա վերջ:

Ամբիոններում որոշակի աշխատանքներ են տարվում մագիստրատուրայում նոր տեսական կուրսերի մշակման վերաբերյալ (հաղորդակցական ոճաբանություն, գեղարվեստական տեսքի վերլուծություն):

Արդեն ստեղծվել են արդի ֆրանսերենի բառագիտության ձեռնարկ, ընթացքի մեջ են ևս մի քանի ուսումնական ձեռնարկներ՝ ֆրանսերենի ոճաբանություն, անգլերենի բառագիտություն, միջմշակութային հաղորդակցման առաջին հայերեն դասագիրքը:

Ամբիոններում աշխատանքներ են տարվում սերնդափոխության՝ հատկապես երիտասարդ տեսաբան դասախոսների պատրաստման ուղղությամբ:

Ընթացքի մեջ է տեսական դասընթացների տարբերակված ծրագրերի և դասախոսությունների ստեղծումը:

Ընդլայնվել են միջամբիոնական կապերը, հատկապես զուգադրական բնույթի աշխատությունների քննարկման, համատեղ գիտաժողովների կատարման, ատենախոսությունների համատեղ կարծիքների պատրաստման ուղղությամբ:

Գործում են մի շարք հատուկ կամընտրական կուրսեր՝ ֆոնոստիլիստիկա, հերմենևտիկա, վիտուալ խոսույթ և այլն:

Դրա հետ մեկտեղ կան մի շարք բացթողումներ.

Համակարգված չէ տեսական գիտելիքի ստուգումը և գնահատումը:

Բացակայում են ընդհանուր լեզվաբանության նորագույն ուղղություններին վերաբերող համակարգված ուսումնական նյութեր, միջազգային չափանիշներին և նոր ծրագրերին համապատասխանող ժամանակակից ուսումնական ձեռնարկներ՝ հատկապես հայերեն լեզվով:

Տեսական առարկաներից բավարար մակարդակով չեն անցկացվում անհատական և ինքնուրույն աշխատանքներ:

Անբավարար է տեխնիկական միջոցների ներդրումը ուսումնական գործընթացում:

Բավարար չէ որոշ տեսական առարկաների (ոճաբանություն, բառագիտություն) դասավանդվող նյութի հաղորդակցական և մշակութաբանական ուղղվածությունը:

Բավարար մակարդակով չի իրականանում միջամբիոնական համագործակցությունը լեզվական ամբիոնների հետ, ինչպես նաև հոգեբանության և հասարակական գիտությունների, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի նարդու իրավունքների, ժողովրդավարության և եվրոպագիտության ամբոնների հետ, բացակայում է լեզվական ուղղվածությունը այս ամբիոնների կողմից իրականացվող դասընթացներում:

2.7. Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև հիմք ընդունելով Եվրախորհրդի կողմից ընդունված լեզվական քաղաքականության առանցքային դրույթները և համալսարանի ռազմավարական ծրագիրը, այն է՝ դառնալ միջմշակութային հաղորդակցման, լեզվաբանական մտքի զարգացման և մասնավորապես լեզվաբանության ու կրթության նորագույն ուղղությունների արմատավորման և տարածման օջախ:

3. Հանձնարարել լեզվաբանության և հաղորդակցման տեսության, ինչպես նաև լեզվական բոլոր ամբիոններին.

3.1 . Մինչև 2007/2008 ուս.տարվա վերջը մշակել ընդհանուր լեզվաբանության նորագույն ուղղություններն արտացոլող և միջմշակութային հաղորդակցության տեսական դասընթացներ, ստեղծել միասնական ծրագրեր մագիստրատուրայում՝ համալրելով այն նոր բաժիններով:

3.2. Անցկացնել միջամբիոնական գիտագործնական սեմինարներ՝ քննարկելով տեսական դասընթացների դրվածքը և ծրագրերը՝ ըստ լեզուների մշակելով միասնական մոտեցումներ /կոորդինատոր՝ լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն/:

3.3. Մինչև 2007/2008 ուս. տարվա վերջը ավարտել մագիստրատուրայում նախատեսվող դասախոսությունների էլեկտրոնային տարբերակները:

3.4. Մինչև ուս. տարվա վերջ բոլոր լեզվական ամբիոններում մշակել միասնական թեմատիկ հատուկ կուրսեր:

3.5. Մինչև 2007-2008 ուս.տարվա վերջ մշակել նոր առարկայական ծրագրեր և վերանայել առարկայական նկարագրերը:

3.6. Պատրաստել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր. քրեստոմատիաներ՝ կրթական նոր պահանջներին համապատասխան:

3.7. Ընդլայնել համագործակցությունը հոգեբանության և հասարակական ամբիոնի հետ՝ հոգելեզվաբանության, էթնո և հանրալեզվաբանության, լեզվի փիլիսոփայության, լեզվի և տրամաբանության դասընթացներ պատրաստելու համար:

3.8 Ամբիոններում քննարկել և համատեղ գիտագործնական սեմինարներում մշակել միջոցառումների պլան՝ նպատակաուղղված ասպիրանտների գիտահետազոտական գործունեության բարելավմանը:

3.9 Ստեղծել միջամբիոնական մշտական գործող սեմինար՝ լուսաբանող լեզվաբանական մտքի նորագույն արդյունքները և դրանց հնարավոր կիրառումը:

3.10 Ընդլայնել համագործակցությունը հայագիտության ամբիոնի հետ՝ իրականացնելով զուգադրական բնույթի աշխատանքներ:

Սույն որոշման կատարումը դնել լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի և լեզվական ամբիոնների վրա, իսկ կատարման հսկողությունը՝ զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի վրա:

2. Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի ամբիոնների 2008թ. գիտաուսումնական և գիտամեթոդական պլանների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Առաջին ընթերցմամբ պայմանականորեն հաստատել 2008թ. գիտամեթոդական և գիտաուսումնական պլանները: Հանձնարարել ամբիոններին մինչև ս.թ. դեկտեմբեր ամսվա վերջ պլաններից հանել կատարված աշխատանքները և վերախմբավորել/պլանավորված աշխատանքները՝ ըստ համալսարանի մշակած ուղղությունների, որից հետո ներկայացնել վերջնական հաստատման:

3. Լսելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթի արդյունքների վերաբերյալ **և քննարկելով** 23.11.2007թ. ռեկտորատ հ.12 նիստի որոշումը՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 23.11.2007թ. ռեկտորատ հ.12-ի որոշումը և գիտական խորհրդին կից գիտության հանձնաժողովի կողմից հավանության արժանացած «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթին ներկայացված ներքոնշյալ աշխատանքների հեղինակներին պարգևատրել 75000-ական /յոթանասունհինգ հազար/ դրամի չափով:

1. **Ս. Զոլյան** - «Семантика и поэтика поэтического перевода-заметки об армянской поэзии в зеркале русских переводов».
2. **Ի.Աթաջանյան** - « Из истории русско-армянских связей X-XVIII веков»

4. Լսելով ոսումնական մասի վարիչ Ջ.Սողոմոնյանի հաղորդումը, որը ներկայացրեց «Լավագույն ֆակուլտետ, կուրս, ակադեմիական խումբ» ստուգատես-մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական խորհրդին կից գիտության հանձնաժողովի և 23.11.2007թ. ռեկտորատ հ.12 նիստի որոշումները՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 23.11. 2007թ. ռեկտորատ հ.12-ի որոշումը.

1. **«Լավագույն ակադեմիական խումբ»** ճանաչել լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի **4-րդ կուրսի անգլերեն-հայերեն թարգմանչական առաջին խումբը** և գերազանց առաջադիմություն ունեցող ներքոնշյալ ուսանողներին պարգևատրել մեկ կրթաթոշակի չափով / վեց հազար դրամ/ .

1. Բաբայան Դիանա
2. Սիմոնյան Ամալյա
3. Ահարոնյան Անահիտ
4. Տեր-Ազարյան Լիլիթ
5. Նիկողոսյան Արմենուհի
6. Խաչատրյան Անուշ
7. Սարգսյան Լիլիթ
8. Հովհաննիսյան Զարինե
9. Ռոմանենկո Հասմիկ
10. Սահակյան Աննա
11. Ալեքսանյան Իննա
12. Աղայան Աննա

2. «Լավագույն ֆակուլտետ» ճանաչել *Օտար լեզուների ֆակուլտետը*:
3. «Լավագույն ուսանող» ճանաչել ներքոնշյալ ուսանողներին և պարզևատրել.
- 1. Վահան Ջաքարյանին - ՕԼՖ, 5-րդ կուրս, ֆրանս. բաժին, 1-ին խումբ
- 40000 / քառասուն հազար/ դրամ
 - 2. Սիրվարդ Ամատունուն - ՌՕԼՖ, 4-րդ կուրս, «Գ» խումբ
- 30000 / երեսուն հազար/ դրամ
 - 3. Դիանա Բաբայանին - ԼՄՅՖ, 4-րդ կ., անգլ./հայ. թարգմ. բաժին, 1-ին խ.
- 20000 / քսան հազար/ դրամ

5. **Լսելով** համալսարանի իրավախորհրդատու Ն. Ներսիսյանի հաղորդումը Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում մրցույթի անցկացման ընթացակարգի վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ներկայացված ընթացակարգը՝ կատարելով որոշակի փոփոխություններ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Համալսարանի 2007թ. ուսումնական գործընթացի բարեփոխումների մասին հաշվետվություն /զեկ. զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյան/ :
2. ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից 2007թ.-ին իրականացրած գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների մասին հաշվետվություն / զեկ. գիտքարտուղար՝ Դ. Ղազարյան/ :
3. ԵրՊԼՀ-ի 2007թ.-ի ֆինանսական բյուջեի կատարողականի և 2008թ.-ի բյուջեի մասին /զեկ. վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Գ. Բալայան/ :
4. Մրցույթ դրոցենտի գիտական կոչում շնորհելու համար :
5. Ընթացիկ հարցեր :

1. Լսելով զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի հաշվետվությունը համալսարանում 2007 թվականին իրականացված ուսումնական գործընթացի բարեփոխումների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Համալսարանում 2007 թվականին ուսումնական գործընթացի բարեփոխումների իրականացմանը ուղղված աշխատանքները բխում են ԵրՊԼՀ ռազմավարական ծրագրից:
2. Մշակվել, հաստատվել և ներ է դրվել ԵրՊԼՀ –ում ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտավարկանշային համակարգը:
3. Արդիականացնել է կրեդիտների հաշվառման և կուտակման համակարգի էլեկտրոնային բազան:
4. Մշակվել է ԵրՊԼՀ –ում բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման, հաստատման և կառավարման հայեցակարգը:
6. Որակի հավաստման խնդիրների հետ սերտորեն կապակցված ներ է դրվել՝
 - Առարկայական նկարագրերի կազման կարգը
 - Պրոֆ դասախոսական անձնակազմի աշխատանքային նորմերը
 - Պրոֆ դասախոսական անձնակազմի վարկանիշի չափման գործիքակազմը
 - Ուսանողների մանկավարժական և արտադրական պրակտիկաների կարգը
 - Ավարտական ամփոփիչ որակավորման չափորոշիչը
7. Ավելի է ակտիվացել միջազգային կապերի հաստատմանն ուղղված գործունեությունը:

Սրա հետ մեկտեղ համալսարանի գիտական խորհուրդը նշում է, որ

- կրթական բարեփոխումների ընթացքը դեռևս ամբողջական չէ,
- առանձին ստորաբաժանումների կողմից նկատվում են թերացումներ,
- համալսարանում ընթացող ուսումնական գործընթացը մասամբ է կարգավորվում գործող կարգերով,
- առարկայական նկարագրերի կրեդիտային համակարգին համապատասխանեցումը հաճախ կրում է ձևական բնույթ,
- կամընտրական դասընթացները ուսումնական ծրագրերում սակավաթիվ են,
- դանդաղում են աշխատանքները մագիստրոսական ծրագրերի մշակման ուղղությամբ,
- միջազգային համագործակցության արդյունքները անմիջապես չեն կիրառվում կամ ներդրվում ուսումնական գործընթաց

- բավարար չէ ուսխորհրդի մասնակցությունը ուսումնական ծրագրերի գործընթացին և անհրաժեշտ է:

Ելնելով վերոնշյալից գիտխորհուրդը որոշում է`

1. ԵրՊԼՀ-ում 2007 թվականին իրականացված ուսումնական գործընթացի բարեփոխումները գնահատել բավարար:
2. Արձանագրել կրթական բարեփոխումների համապատասխանությունը ԵրՊԼՀ 2006-2010 ռազմավարական ծրագրի գերակայություններին:
3. Կրեդիտների կուտակման գործառույթի ընթացակարգերը ապահովելու նպատակով մինչև 2008 թ. մայիս մշակել կարգ և ստեղծել ֆակուլտետային ակադեմիական գրանցումների գրասենյակներ (Պատ.՝ դեկաններ) :
4. Ուսանողների անհատական ուսուցման ծրագրերը կազմելու և աջակցելու նպատակով մինչև 2008թ. հունիս կազմակերպել ֆակուլտետային ուսումնական խորհրդատուների ծառայություն (Պատ.՝ ամբիոնների վարիչներ, դեկաններ)
5. Համալսարանի գործունեությանը ԵԲԿՏ-ի կառուցվածքին համապատասխանեցնելու և համալսարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության պլանավորման և կառավարման ամբիոնի ծրագրերի իրագործման ընթացքում 2008 թ. ըստ պատրաստվածության ստեղծել ստորաբաժանումներ՝ հետազայում նպատակ ունենալով հիմնել կրթական ծրագրերի մշակման և ներդրման վարչություն; (Պատ.՝ պրոռեկտոր Կրթ.պլանավորման և կառավարման ամբիոնի վարիչ)
6. Կրեդիտների կուտակման գործառույթն ապահովելու նպատակով անցնել ուսումնառության անհատական ծրագրերի կազմման ու դասընթացների գրանցմանը (Պատ.՝ ուսումնական մասի վարիչ, դեկաններ)
7. Եվրոպական որակավորումների հենքին ԵՊԼՀ-ի որակավորումները համապատասխանեցնելու, մասնագիտական կողմնորոշում և հասարակական տեղեկատվության ապահովման նպատակով մինչև 2008 թ. հուլիս մշակել և հրատարակել բուհում դասավանդվող մասնագիտությունների՝ նրանց առարկայացանկի տեղեկագրեր, տեղադրելով նաև վեբկայքում: (Պատ.՝ ամբիոնների վարիչներ , դեկաններ)
8. Շարունակել աշխատանքները առարկայական նկարագրերի նորոգման ուղղությամբ, հիմնական շեշտը դնելով հետազոտական, անհատական և ինքնուրույն բաղադրիչների ներդրմանը, կամընտրական դասընթացների քանակը հասցնելով 20 տոկոսի (Պատ.՝ ամբիոնների վարիչներ, ֆակուլտետային խորհուրդներ)
9. Կրթության երկրորդ աստիճանի՝ մագիստրատուրայի ներդրման նպատակով
 - մինչև 2008 թ. հունվարի 20-ը ավարտել պարտադիր և կամընտրական առարկայախմբեր ստեղծումը և դրանց առարկայական նկարագրերի մշակման գործընթացը (Պատ.՝ ամբիոնների վարիչներ, ֆակուլտետային խորհուրդներ)
 - սահմանել մագիստրոսի մասնագիտական իրազեկություններն ու գիտելիքների գնահատման չափանիշները (Պատ.՝ ամբիոնների վարիչներ)
 - քննարկել և հաստատել ԲՄԿ համապատասխան ուղղությունների մագիստրոսական ուսումնական պլաններն ու չափորոշիչները (Պատ.՝ ամբիոնների վարիչներ, ֆակուլտետային խորհուրդներ)
 - Մինչև 2008 թ. փետրվար ներկայացնել առաջարկություն- փաթեթներ մագիստրոսական նոր մասնագիտական ուղղությունների պլանավորման, ծրագրավորման և ներդրման նպատակով:
10. Ուսանողակենտրոն կրթական համակարգի ներդրման և զարգացման համար 2008 թ-ի ընթացքում առաջարկել, մշակել ուսանողական ծառայությունների համակարգ, ներառելով կրթական, սոցիալական և բարոյահոգեբանական բաղադրիչները (Պատ.՝ պրոռեկտորներ, ուսանողական խորհուրդ) :
11. Ակտիվացնել միջազգային համագործակցությունը՝ ԵՊԼՀ-ի շնորհվող որակավորումների միջազգային ճանաչման նպատակով, կենտրոնացնելով համագործակցությունը միջազգային համալսարանական կոնսորցիումների ընդգրկման և համատեղ ծրագրերի ստեղծման ուղղությամբ (Պատ.՝ պրոռեկտոր, ֆակուլտետներ, ամբիոններ) :

12. Հանձնարարել համալսարանի զարգացման գծով պրոռեկտորին, ուսումնական մասի և դեկանների հետ համատեղ մշակել և ռեկտորատի հաստատմանը ներկայացնել սույն որոշումից բխող միջոցառումների պլան: (Պատ. պրոռեկտոր, ուսումնական մասի վարիչ, դեկաններ)

13. Առաջարկել ուսխորհրդին քննարկման առարկա դարձնել ուսանողության մասնակցությունը ուսումնական գործընթացներին: Ակտիվացնել ուսանողների կապը Միացյալ Եվրոպական Կրթական տարածաշրջանի հետ :

14. Սույն որոշման կատարումը դնել ամբիոնների և ֆակուլտետային խորհրդների, իսկ հսկողությունը համալսարանի զարգացման գծով պրոռեկտորի վրա:

2. Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ. Ղազարյանի հաշվետվությունը՝ ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից 2007թ.-ին իրականացված գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գնահատել բավարար համալսարանի ամբիոնների կողմից 2007թ.կատարած գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունը:

Ի կատարումն գիտական խորհրդի 31.12.2007 թ. հ. 4 նիստի որոշման

2. Արձանագրել դրական տեղաշարժեր հետևյալ ուղղություններով՝

2.1 Ամբիոնների ակտիվ մասնակցություն հանրապետությունում և հանրապետությունից դուրս կազմակերպված գիտաժողովներին և գիտա-գործնական սեմինարներին :

2.2 Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, որն իր արտացոլումն է գտել համատեղ գիտաժողովների և գիտա-գործնական սեմինարների կազմակերպման , ինչպես նաև միջազգային համատեղ ժողովածուներում և պարբերականում գիտական աշխատանքների հրատարակման գործընթացում:

2.3 Դոկտորանտուրայի գործընթացի ակտիվացում. դոկտորական ատենախոսության պաշտպանություն, դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատում, դոկտորանտուրայում ուսումնառություն:

2.4 Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների զգալի աճ և մասնագիտությունների ընդլայնում:

2.5 Միջամբիոնական համագործակցության զգալի ակտիվացում, որն իր արտացոլումն է գտել համատեղ գիտամեթոդական սեմինարների կազմակերպման և մասնակցության գործընթացում՝ հատկապես խրախուսել անգլերենի ամբիոնների և մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի փորձը:

3. Դրա հետ մեկտեղ արձանագրել գիտական խորհրդի 31.12.2007 թ. հ. 4 նիստի որոշման հանձնարարականների հետևյալ բացթողումները.

3.1 Ամբիոնների կողմից ներկայացված գիտահետազոտական և գիտամեթոդական տարեկան պլանները գիտական մաս են ներկայացվում չհամակարգված և չհստակեցված վիճակով, պահանջված ժամկետներից ուշ, որի հետևանքով դրանք ներկայացվում են կրկնակի հաստատման:

3.2 Բավարար չէ ամբիոնների ներգրավվածությունը միջազգային և դրամաշնորհային ծրագրերում:

3.3 Բավարար մակարդակով չեն տարվում աշխատանքները անբիռններին կից ՈՒԳԸ-ում. ժամանակին չեն ներկայացվում աշխատանքային պլանները, պարբերական բնույթ չեն կրում ՈՒԳԸ-ի սեմինարները:

3.4 Ժամանակին չեն ներկայացվում ասպիրանտների և հայցորդների ատեստավորման վերաբերյալ հաշվետվությունները:

3.5 Բավարար հիմքերի վրա չէ երիտասարդ գիտնականների խորհրդի աշխատանքը:

3.6 Թեկնածուական ատենախոսություններ չեն պաշտպանվում հետևյալ մասնագիտություններից՝

- «Գերմաներեն լեզուներ»- գերմաներեն
- «Ռոմանական լեզուներ»- իսպաներեն

Հիմք ընդունելով համալսարանի ռազմավարական ծրագիրը՝ համալսարանի գիտահետազոտական գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու և վերոնշյալ բացթողումները շտկելու նպատակով՝

4. Հանձնարարել

4.1 Ամբիոններին՝ պարբերաբար կազմակերպել միջամբիոնական գիտամեթոդական սեմինարներ, հողվածների քննարկումներ՝ դրանք համարելով որպես գտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման արդյունավետ միջոց:

4.2 Ամբիոններին՝ միջազգային գիտաժողովների, գիտամեթոդական սեմինարների աշխատանքներում առավել ակտիվորեն ընդգրկել երիտասարդ դասախոսներին, ասպիրանտներին ու հայցորդներին:

4.3 Շարունակել ընդլայնել միջամբիոնական համագործակցությունը, ինչպես նաև համագործակցությունը միջազգային կառույցների հետ, ակտիվ մասնակցությունը ցուցաբերել դրամաշնորհային ծրագրերում:

4.4 Ամբիոններին՝ պահպանել գիտահետազոտական և գիտամեթոդական տարեկան պլանների ներկայացման ժամկետները, ինչպես նաև պլաններում հստակեցված ներկայացնել գիտական ուղղությունները, արդիականացնել թեմաները:

4.5 Թողարկող ամբիոններին՝ ժամանակին ներկայացնել ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հաշվետվությունները:

4.6 ՈՒԳԸ- ի նախագահին՝ ակտիվացնել ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքը, պարբերաբար կազմակերպել ուսանողների հետազոտական գործունեությունը խթանող սեմինարներ, ստեղծել պարբերական, որտեղ զետեղված կլինեն ուսանողական լավագույն հետազոտական աշխատանքները, զեկուցումները:

4.7 Ամբիոններին՝ անհրաժեշտ աշխատանք տանել ասպիրանտուրայի հավակնորդների հետ, վերանայել ընդունելության հարցաշարերը՝ դրանք համապատասխանեցնելով ծրագրային պահանջներին:

4.8 Ամբիոններին՝ ապահովել գիտական և ուսումնական ծրագրերի կապը՝ գիտական հետազոտությունների արդյունքները կիրառելով դասընթացներում:

4.9 Ֆակուլտետային խորհուրդներին և ամբիոններին՝ պրոֆեսորադասախոսական կազմի մրցույթի ժամանակ նախապատվությունը տալ գիտատեսազոտական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ցուցաբերող դասախոսներին:

4.10 Գերմաներենի, 2-րդ օտար լեզվի և անգլերեն 2-րդ մասնագիտության ամբիոններին՝ աշխատանքներ տանել ամբիոններում անհրաժեշտ գիտական ներուժ ապահովելու ուղղությամբ :

Սույն որոշման կատարումը դնել ամբիոնների վրա, հսկողությունը՝ համալսարանի գիտքարտուղարի վրա:

3. Լսելով վարչատնտեսականաշխատանքներիգծով պրոռեկտոր՝ Գ. Բալայանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի 2007թ.-ի ֆինանսական բյուջեի կատարողականի և 2008թ.-ի բյուջեի մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Գ. Բալայանի հաղորդումը:

5.ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լսելով համալսարանի ռեկտոր պարոն Ս. Ջոլյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների արդյունքների վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Ս. Ջոլյանի հաղորդումը և ներքոնշյալ դասախոսներին հանձնել որակավորման սերտիֆիկատներ.

1. Սեդիկյան Մարինե Ռոբերտի
2. Շիկանյան Ելենա Լեոնիդովնա
3. Մռռյան Մարինա Նազարի
4. Փանյան Լարիսա Գրիգորի
5. Առուտչյան Գյուլնարա Իսահակի
6. Խորոտյան Ջեփսիմե Շատինովի
7. Կանանյան Սոֆյա Վիկտորի
8. Բադիկյան Հայկազ Հարությունի
9. Բաղդասարյան Նորա Վարդանի
10. Թադևոսյան Էդուարդ Ֆրունզեյի
11. Հովհաննիսյան Կարինե Մաքսիմի
12. Սաֆարյան Լիանա Ապրեսի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2007-2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում /զեկ. ուսումնական մասի վարիչ Զ. Սողոմանյան/:
2. Տեղեկատվություն ֆակուլտետների ղեկանների տարեկան հաշվետվության վերաբերյալ:
3. Անդրադարձ ԵՐՊԼՀ-ի 2007թ-ի ուսումնական գործընթացի բարեփոխումների վերաբերյալ 26.12.2007թ-ի N 4 գիտխորհրդի նիստի որոշմանը /զեկ. զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյան/:
4. 2008 թ.-ի ԵՐՊԼՀ-ի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանների վերահաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

1. Լսելով և քննարկելով 2007-2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին ուսումնական մասի վարիչ Զ. Սողոմանյանի զեկույցը՝ գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Ի գիտություն ընդունել 2007/2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին հաղորդումը:

2. 2007/2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները համարել դրական՝ կարևորելով այն հանգամանքը, որ նախորդ տարիների համեմատ դրական տեղաշարժեր են գրանցվել կրեդիտային համակարգի լույսի ներքո ուսումնական գործընթացի կազմակերպման, առարկայական նկարագրերի ներդրման, քննական և լուծարումների շրջանների կազմակերպման ուղղություններով:

3. ԱՐՁԱՆԱԳՐԵԼ՝

3.1. 2007/2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմության տոկոսը /73.6%/:

3.2. Համալսարանի ֆակուլտետների և ամբիոնների կողմից 01.03.2007թ. գիտխորհրդի N 5 որոշման կատարման ընթացքի բացթողումներն ու թերացումները՝ ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգման, էլեկտրոնային առարկայական նկարագրերի, դասախոսությունների և դասագրքերի ուսումնական գործընթաց ներդրման, պարբերական մոնիթորինգի անցկացման ուղղությամբ:

3.3. ՕԼ, ԼՄՀ և ՌՕԼ ֆակուլտետների ղեկանատների թույլ հսկողությունը դասախոսների դասամատյանների լրացման, գնահատման գրանցումների նկատմամբ:

3.4. Համալսարանի ֆակուլտետների ուսանողների և դասախոսների հաճախումների վերահսկման պատասխանատուների անկանոն գործելակերպը, անհարգելի բացակայությունների ժամանակին բացահայտման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման, դրանց հրապարակայնացման ուղղությամբ:

3.5. Առարկայական նկարագրերի ովանդակության ճշգրտման և ներդրման ուղղությամբ իրականացված գործընթացների ոչ լիարժեք իրականացումը:

3.6. Ուսուցման մոդուլային համակարգում գտնվող առարկաների գնահատման թափանցիկության ապահովման և ուսանողների վաղաժամկետ իրազեկման գործընթացների ոչ լիարժեք իրականացումը:

4. Հանձնարարել համալսարանի ֆակուլտետներին

4.1. 2007/2008 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները վերլուծել՝ հիմք ընդունելով ուսումնական գործընթացի որակի ապահովման վերահսկման և կառավարման համալսարանական հայեցակարգը:

4.2. Ֆակուլտետների փետրվարյան խորհուրդներում քննարկել վերջին տարիներին ցածր առաջադիմություն ցույց տվող առարկաների դրվածքը, դրանց համապատասխանությունը

ուսանողակենտրոն ուսուցմանը, տվյալ ուսումնական ծրագրերի համապատասխանությունը տվյալ մասնագիտությանը ներկայացվող պահանջներին և դրանց նպատակահարմարությանը ընդգրկվելու բարձրագույն կրթական մասնագիտական առարկայացանկում:

4.3. Մինչև մարտի 15-ը անց կացնել դիտարկումներ՝ հետագա քննարկումների ապահովմամբ, ուսումնական բուն գործընթացը և առարկայական նկարագրերը համապատասխան ուղղությամբ՝ ապահովելով առարկայական նկարագրերի թափանցիկությունը և մատչելիությունը ուսանողական խմբերին և հոսքերին:

4.4. Բարելավել աշխատանքներն ուսանողների և դասախոսների հաճախումների, ամենօրյա ստուգման և ուսումնասիրման ոլորտում՝ սույն գործընթացում անշեղորեն ղեկավարվելով համալսարանի ներքին կարգուկանոնի, ուսանողների և դասախոսների պարտականությունների պահանջներով:

4.5. Մինչև փետրվարի 20-ը ամբիոններում և ֆակուլտետային խորհուրդներում քննարկել ուսումնական գործընթացի բարեփոխումներին ուղղված և կրթական գործընթացը խթանող համալսարանի գիտխորհրդի 26.17.07թ. որոշումը և հաստատել որոշման կատարման միջոցառումների պլան:

4.6. Ձեռնարկել շտապ միջոցառումներ 01.03.2007թ. գիտխորհրդի N 5 որոշման կատարման ընթացքում թույլտրված բացթողումների վերացման ուղղությամբ:

5. Հանձնարարել համալսարանի ամբիոններին

5.1. Մինչև ս.թ. մարտի 31-ը վերջնական տեսքի բերել 4-րդ կուրսի առարկայական նկարագրերը և դրանք մեկական օրինակով ներկայացնել ուսումնական մաս և համապատասխան դեկանատ:

5.2. Մինչև ս.թ. փետրվարի 30-ը առարկայական նկարագրերի և դասախոսություններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել ԵրՊԼՀ համակարգչային կենտրոն՝ կայքում տեղադրելու համար:

5.3. Ուսումնական գործընթացն անխափան կազմակերպելու համար ուշադրությունը բևեռել առարկայական նկարագրերի գնահատման բաղադրիչների ճշգրիտ ընտրության վրա:

5.3. Ակտիվացնել դասախոսությունների էլեկտրոնային բանկի ստեղծման և համալսարանական կայքում տեղադրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

5.4. Ուսումնական գործընթաց ներմուծել ուսանողի հետ անհատական աշխատանքի, ինչպես նաև ձեռքբերված գիտելիքների ընթացիկ ստուգման ձևեր:

5.5. Քննարկել կրեդիտային համակարգում գտնվող 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսեցիների առաջադիմությունը, մշակել համապատասխան ծրագրեր ետ մնացող և փորձաշրջանում գտնվող ուսանողների համար:

5.6. Խորությամբ վերլուծել և բացահայտել ուսումնական գործընթացում տեղ գտած թերությունները, մշտապես քննարկել դասալսումների արդյունքները և առարկաների դասավանդման ընթացքը:

6. Հանձնարարել համալսարանի ուսումնական մասին

6.1. Անցկացնել մոնիթորինգ առարկայական նկարագրերի բովանդակության, ներդրման, կրեդիտային ուսուցման ընթացքի և առկա խնդիրների շուրջ: Մոնիթորինգի արդյունքները զեկուցել համալսարանի ռեկտորատին փետրվարի 15-ից 20-ը ընկած ժամանակահատվածում:

6.2. Ամիսն առնվազն մեկ անգամ անցկացնել մոնիթորինգ դասամատյաններում լրացումները ստուգելու նպատակով: Մոնիթորինգի արդյունքները զեկուցել համալսարանի ռեկտորատին հաջորդաբար փետրվարի 20-25, մարտի 25-30-ը, ապրիլի 25-30-ը և մայիսի 20-25-ը:

7. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի ամբիոնների, ֆակուլտետների և ուսումնական մասի վրա, իսկ հսկողությունը՝ համալսարանի զարգացման գծով պրոռեկտորի վրա:

2. Լսելով և քննարկելով զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի տեղեկատվությունը ֆակուլտետների դեկանների տարեկան հաշվետվության վերաբերյալ՝ գիտխորհուրդը
ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն պարոն Ավագյանի հաղորդումը:

3. Լսելով և քննարկելով ԵրՊԼՀ-ի 2007թ-ի ուսումնական գործընթացի բարեփոխումների վերաբերյալ 26. 12. 2007թ.-ի գիտխորհրդի N 4 նիստի որոշման մասին զարգացման գծով պրոռեկտոր պրն. Մ.Ավագյանի հաղորդումը, որը հիմնականում վերաբերում էր մագիստրատուրային, գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն պարոն Ավագյանի հաղորդումը:
Տասնօրյա ժամկետում ներկայացնել միջոցառումների պլանը: Հանձնարարել ամբիոններին ևս մեկ անգամ կոնկրետացնել նախագիծը և մագիստրատուրայի ստեղծման համար ուսումնասիրել միջազգային և հանրապետական փորձերը:

4. Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը 2008 թ.-ի ԵրՊԼՀ-ի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանների վերահաստատման մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Վերահաստատել 2008 թ.-ի ԵրՊԼՀ-ի գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանները՝ ըստ մշակված գիտական ուղղությունների:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի զարգացման և բարեփոխման հայեցակարգի մասին / զեկ.՝ Ս.Ջոլյան/:
2. ԵրՊԼՀ-ի ռեկտորի թեկնածության պաշտպանության մասին:

Լսելով և քննարկելով Ս.Տ. Ջոլյանի ներկայացրած ծրագիրը առաջիկա 5 տարիներին նախատեսվող կրթական բարեփոխումների, բուհի գիտական աշխատանքների, ինչպես նաև ուսման որակի բարձրացման վերաբերյալ՝ գիտխորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ս.Ջոլյանը, որը 1997 թվականից ղեկավարում է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը: Պրոֆ. Ջոլյանը կարողացել է պահպանել համալսարանի լավագույն ավանդույթները և միաժամանակ արմատավորել համաշխարհային և եվրոպական համալսարանական կրթության ժամանակակից միտումները: Համալսարանի հաջողությունները պայմնավորված են նաև պրոֆ. Ջոլյանի անձնային բարձր հատկանիշներով՝ օբյեկտիվությամբ, ազնվությամբ, պահանջկոտությամբ և հետևողականությամբ, որոնց շնորհիվ նա կարողացել է ոչ թե՛ միայնակ գործել, այլ միավորել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերը, իրականացնել մարտավարություն՝ հիմնված ուսանողների և դասախոսների արդյունավետ համագործակցության վրա:

Վերջին տարիների բուհի հարաշարժ զարգացումն ապահովվում է 2006-2010 թվականի ռազմավարական ծրագրով, որը, հիմք ընդունելով համաեվրոպական մոտեցումները, պարունակում է գործողությունների մի այնպիսի հաջորդականություն, որն ապահովում է ներդաշնակ տարբերակված ուսուցում կրեդիտային եղանակով և նախատեսում է բուհի առաջընթացային զարգացումը:

Համալսարանում մշակվել և ներդրվել են ուսանողների հաճախման, գնահատման և առաջադիմության համակարգերը, որոնց շնորհիվ բարձրացել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և գնահատման օբյեկտիվությունը:

Համալսարանում մշակվել և ներդրվել են ուսանողների հաճախման, գնահատման և առաջադիմության համակարգերը, որոնց շնորհիվ բարձրացել է ուսումնական գործընթացի արդյունավետությունը և գնահատման օբյեկտիվությունը:

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհուրդը միաձայն հավանություն է տալիս զարգացման և բարեփոխման հայեցակարգին և պաշտպանել բուհի գործող ռեկտոր Սուրեն Ջոլյանի թեկնածությունը ԵրՊԼՀ-ի ռեկտորի թեկնածությունը առաջիկա ընտրությունում: